ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» հունիսի 2026 թ. N 91-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 264-Ա/5 ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 731-Ա/5 ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 16-ին կայացած նիստի N 23 արձանագրությունը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2-րդ մասով, 4-րդ մասի «բ» կետով, 5-րդ մասով, 64-րդ հոդվածի 1-ին մասով և 65-րդ հոդվածով, «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով՝

1. հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի և ներդիրի տրամադրման մասին» N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի նոր ներդիրի տրամադրման մասին» N 731-Ա/5 հրամաններով «ԻՄՊԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել են քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում» 2-րդ դասի լիցենզիայի «Կապի համակարգեր» և «Էլեկտրամատակարարում» ենթատեսակների ներդիրներ,

2. հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի

և ներդիրի տրամադրման մասին» N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի նոր ներդիրի տրամադրման մասին» N 731-Ա/5 հրամաններով «ԻՄՊԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել են քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում» 2-րդ դասի լիցենզիայի «Կապի համակարգեր» և «Էլեկտրամատակարարում» ենթատեսակների ներդիրներ,

3. հաշվի առնելով, որ վարչական վարույթի շրջանակում լիցենզավորող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են նշված հրամանների ընդունման համար հիմք հանդիսացած գործի նյութերը, Ընկերության կողմից նախկինում ներկայացված հայտերը և դրանց կից փաստաթղթերը, ինչպես նաև այդ փաստաթղթերի բավարարությունը՝ համապատասխան ենթատեսակների ներդիրների տրամադրման համար անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերի առկայության տեսանկյունից,

4. հաշվի առնելով, որ լիցենզավորող հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 16-ին կայացած նիստի N 23 արձանագրությամբ արձանագրել է, որ նշված հրամանների ընդունման պահին գործի նյութերով բավարար և ամբողջական կերպով չեն հաստատվել քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում» 2-րդ դասի լիցենզիայի «Կապի համակարգեր» և «Էլեկտրամատակարարում» ենթատեսակների ներդիրների տրամադրման համար անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերը, այդ թվում՝ ներկայացված աշխատանքների՝ համապատասխան շինարարության թույլտվության կամ օրենքով նախատեսված այլ վերաբերելի իրավահաստատող փաստաթղթի հիման վրա իրականացված լինելու և որպես լիցենզավորման համար հաշվառելի փորձ գնահատվելու հանգամանքները,

5. հաշվի առնելով, որ լիցենզավորող հանձնաժողովը եզրահանգել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի N 731-Ա/5 հրամանների ընդունման պահին առկա փաստաթղթային հիմքից չէր բխում ներդիրների տրամադրման մասին դրական վարչական ակտերի ընդունումը, և նույն փաստական հանգամանքների պայմաններում պետք է ընդունվեր այլ բովանդակության վարչական ակտ՝ համապատասխան ներդիրների տրամադրման հայտերը մերժելու մասին,

6. հաշվի առնելով, որ վարչական վարույթի ընթացքում Ընկերությանը տրամադրվել է իր դիրքորոշումը ներկայացնելու, բացատրություններ, առարկություններ և լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու իրական հնարավորություն, Ընկերությունը պատշաճ ծանուցվել է 2026 թվականի մայիսի 6-ին և 2026 թվականի հունիսի 16-ին նշանակված լիցենզավորող հանձնաժողովի նիստերի մասին, սակայն Ընկերության տնօրենը կամ ներկայացուցիչը նիստերին չի ներկայացել և գործի նյութերը չեն համալրվել այնպիսի փաստաթղթերով կամ բացատրություններով, որոնք կարող էին ազդել գործի իրավական գնահատականի վրա,

7. հաշվի առնելով նաև, որ Ընկերության չմասնակցելը լիցենզավորող հանձնաժողովի նիստերին սույն հրամանի համար չի դիտարկվում որպես անվավեր ճանաչման ինքնուրույն նյութական հիմք, այլ գնահատվում է միայն վարչական վարույթի ընթացքում Ընկերության լսված լինելու իրավունքի և գործի նյութերը լրացնելու իրական հնարավորության ապահովման տեսանկյունից,

8. արձանագրելով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի N 731-Ա/5 հրամաններն իրենց ընդունման պահին չեն համապատասխանել գործի փաստական և իրավական հիմքերին, քանի որ դրանցով առաջացված իրավական հետևանքը՝ համապատասխան ենթատեսակների ներդիրների տրամադրումը, չէր բխում վարչական վարույթի նյութերում առկա փաստաթղթերից և լիցենզավորման պահանջներից,

ելնելով ողջ վերոգրյալից՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի և ներդիրի տրամադրման մասին» N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի նոր ներդիրի տրամադրման մասին» N 731-Ա/5 հրամանները:

2. Սույն հրամանի 1-ին կետով նշված վարչական ակտերն անվավեր ճանաչել դրանց ընդունման պահից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի

64-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պաբերությամբ սահմանված իրավական հետևանքների հաշվառմամբ:

3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչությանը սույն հրամանի մասին օրենքով սահմանված կարգով իրազեկել «ԻՄՊԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «ԻՄՊԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը դրա ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ հոդվածով սահմանված վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով՝ սույն հրամանի մասին իրազեկվելու օրվանից օրենքով սահմանված ժամկետում:

6/22/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Եղիազար ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 23

2026 թվականի հունիսի 16-ին, Երևան քաղաքում (Երևան Հանրապետության հրպ., Կառավարական տուն 3, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, 4-րդ հարկ, 442 սենյակ) կայացած լիցենզավորող հանձնաժողովի նիստի

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի և ներդիրի տրամադրման մասին» N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի նոր ներդիրի տրամադրման մասին» N 731-Ա/5 հրամաններն անվավեր ճանաչելու հարցի քննարկման վերաբերյալ

Քաղաքաշինության կոմիտեում տեղի ունեցած նիստին ներկա էր վարչական լսումներ անցկացնող հանձնաժողովը հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի կազմ	
Դավիթ Գրիգորյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի առաջին տեղակալ (լիցենզավորող հանձնաժողովի նախագահ)
Նշան Մարտիրոսյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ
Արա Միքայելյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի իրավաբանական վարչության պետի տեղակալ
Գրիգոր Ծատուրյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության քաղաքականության և գնագոյացման բաժնի պետ
Արկադի Բոյաջյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկքաղաքականության և գնագոյացման
Արմենուհի Մկրտչյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության գլխավոր խորհրդատու (նիստի քարտուղար)

Օրակարգում քննարկվում է.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի N 731-Ա/5 հրամանների իրավաչափության հարցը՝ դրանց ընդունման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի ամբողջականության, ներկայացված տվյալների բավարարության և քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում» 2-րդ դասի լիցենզիայի «Կապի համակարգեր» և «Էլեկտրամատակարարում» ենթատեսակների ներդիրների տրամադրման համար անհրաժեշտ իրավական և փաստական հիմքերի առկայության տեսանկյունից:

Լսեցին՝

Հանձնաժողովի նախագահ Դավիթ Գրիգորյանը ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցը և նշեց, որ հարցի քննարկումը կատարվում է վարչական վարույթի շրջանակներում՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի ապրիլի 21-ի N 59-Ա հրամանի 2-րդ կետով տրված հանձնարարականի հիման վրա՝ հաշվի առնելով 2026 թվականի մարտի 20-ի թիվ ՎԴ/16184/05/25 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշմամբ ձևավորված ընթացակարգային իրավիճակը:

Նշվեց, որ վարչական վարույթի նպատակը գործի նյութերի նոր, լրիվ և բազմակողմանի ուսումնասիրությունն է, այդ թվում՝ Ընկերության կողմից ներկայացվելիք հնարավոր բացատրությունների, առարկությունների և լրացուցիչ փաստաթղթերի գնահատումը:

Լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանը ներկայացրեց, որ Ընկերությանը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2026 թվականի ապրիլի 23-ի N 03/22.1/7043-2026 գրությամբ տեղեկացվել է վարչական վարույթի շրջանակում լիցենզավորող հանձնաժողովի նիստի անցկացման, քննարկվող հարցի բնույթի, ինչպես նաև գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին: Ընկերությունը հրավիրվել է 2026 թվականի մայիսի 6-ին կայանալիք նիստին, սակայն Ընկերության տնօրենը կամ պատշաճ լիազորված ներկայացուցիչը նիստին չի ներկայացել, ինչպես նաև գործի նյութերում առկա չէ Ընկերության կողմից տվյալ նիստի կապակցությամբ ներկայացված գրավոր դիրքորոշում կամ լրացուցիչ փաստաթուղթ:

Հաշվի առնելով վարչական վարույթի շրջանակում Ընկերության լսված լինելու իրավունքի գործնական իրացումն ապահովելու, ինչպես նաև գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները լրացուցիչ պարզաբանելու անհրաժեշտությունը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունիսի 5-ի N 80-Ա հրամանով վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է և նշանակվել է լիցենզավորող հանձնաժողովի նոր նիստ:

Նշվեց, որ Ընկերությանը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2026 թվականի հունիսի 8-ի N 03/22.1/9330-2026 գրությամբ ծանուցվել է 2026 թվականի հունիսի 16-ին՝ ժամը 15:00-ին կայանալիք նիստի մասին՝ միաժամանակ տրամադրելով հնարավորություն ներկայացնելու գրավոր բացատրություններ, առարկություններ, դիրքորոշում, լրացուցիչ փաստաթղթեր և այլ վերաբերելի նյութեր: Սակայն Ընկերության տնօրենը կամ ներկայացուցիչը նիստին չի ներկայացել, և գործի նյութերում առկա չէ Ընկերության կողմից ներկայացված լրացուցիչ փաստաթուղթ կամ գրավոր դիրքորոշում:

Նշվեց նաև, որ նիստից մեկ օր առաջ նիստի քարտուղարի կողմից հայտում նշված հեռախոսահամարով իրականացվել է լրացուցիչ հաղորդակցություն՝ նիստի մասին հիշեցնելու և Կոմիտե մուտքը կազմակերպելու նպատակով: Ընկերության տնօրենը հայտնել է, որ կներկայացնի ներկայանալու անձանց տվյալները, սակայն նման տվյալներ չեն ներկայացվել:

Լիցենզավորման վարչության պետը ներկայացրեց, որ գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2025 թվականի փետրվարի 2-ի N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի N 731-Ա/5 հրամանների ընդունման համար հիմք ծառայած հայտերին կից փաստաթղթերը չեն ապահովել ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2106-Ն որոշմամբ հաստատված պահանջների ամբողջական կատարումը: Մասնավորապես, գործի նյութերում առկա չեն այնպիսի ամբողջական փաստաթղթեր, որոնք կհաստատեին ներկայացված աշխատանքների՝ համապատասխան շինարարության թույլտվության կամ օրենքով սահմանված այլ վերաբերելի իրավահաստատող փաստաթղթի հիման վրա իրականացված լինելը և այդ աշխատանքների հաշվառելիությունը՝ որպես տվյալ ենթատեսակների ներդիրների տրամադրման համար անհրաժեշտ փորձ:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին գործի նյութերը, այդ թվում՝ նախկինում ներկայացված հայտերը, դրանց կից փաստաթղթերը, Ընկերության մասնակցությամբ նախկին քննարկման արդյունքները, Ընկերությանը ուղարկված ծանուցումները, Ընկերության կողմից լրացուցիչ փաստաթղթեր չներկայացնելու հանգամանքը, ինչպես նաև այն փաստը, որ Ընկերությանը տրվել է վարույթում մասնակցելու և իր դիրքորոշումը ներկայացնելու իրական հնարավորություն:

Վարչական վարույթի շրջանակում հանձնաժողովը քննարկեց ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի և ներդիրի տրամադրման մասին» N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի նոր ներդիրի տրամադրման մասին» N 731-Ա/5 հրամանների ընդունման համար հիմք հանդիսացած գործի նյութերը, այդ թվում՝ Ընկերության կողմից ներկայացված հայտերը, դրանց կից փաստաթղթերը, նախկինում կայացած

քննարկումների նյութերը, Ընկերությանը հասցեագրված ծանուցումները, ինչպես նաև վարչական վարույթի ընթացքում Ընկերության կողմից լրացուցիչ փաստաթղթեր կամ բացատրություններ չներկայացնելու հանգամանքը:

Հանձնաժողովը արձանագրեց, որ վարչական վարույթի շրջանակում նշանակված նոր նիստը պայմանավորված է եղել բացառապես տվյալ գործի կոնկրետ փաստական և ընթացակարգային հանգամանքներով՝ հաշվի առնելով նախկինում ընդունված վարչական ակտի անվավեր ճանաչման արդյունքում հարցը նոր քննության առնելու անհրաժեշտությունը, գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների լրացուցիչ պարզաբանման կարիքը, ինչպես նաև Ընկերության՝ վարչական վարույթում լսված լինելու և իր դիրքորոշումն ու անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու հնարավորության պատշաճ ապահովման անհրաժեշտությունը:

Նոր նիստի նշանակումը չի դիտարկվել և չի կարող դիտարկվել որպես լիցենզավորման կամ նմանաբնույթ այլ վարչական վարույթներում յուրաքանչյուր դեպքում կրկնակի լսում անցկացնելու ընդհանուր կանոն կամ պարտադիր վարչական պրակտիկա: Այն իրականացվել է տվյալ վարույթի շրջանակում առկա առանձնահատուկ հանգամանքների հաշվառմամբ՝ վարչական վարույթի լրիվությունը, օբյեկտիվությունը և հասցեատիրոջ ընթացակարգային իրավունքների իրացման հնարավորությունը առավելագույնս ապահովելու նպատակով:

Միաժամանակ արձանագրվեց, որ Ընկերության չմասնակցելը լիցենզավորող հանձնաժողովի նիստերին ինքնին չի դիտարկվում որպես ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի N 731-Ա/5 հրամաններն անվավեր ճանաչելու նյութական հիմք: Այդ հանգամանքը գնահատվում է միայն այն տեսանկյունից, որ Ընկերությանը վարչական վարույթի ընթացքում տրամադրվել է իր դիրքորոշումը ներկայացնելու, բացատրություններ, առարկություններ և լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու իրական հնարավորություն, սակայն Ընկերության կողմից գործի նյութերը չեն համալրվել այնպիսի փաստաթղթերով կամ բացատրություններով, որոնք կարող էին ազդել գործի իրավական գնահատականի վրա: Արձանագրվեց նաև, որ առկա նյութերը բավարար են հարցի քննարկումը շարունակելու և եզրակացություն ձևավորելու համար:

Վարչական վարույթի նյութերի ուսումնասիրությամբ հաստատվում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի N 731-Ա/5 հրամանների ընդունման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը դրանց ընդունման պահին բավարար չեն եղել քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում» 2-րդ դասի լիցենզիայի «Կապի համակարգեր» և «Էլեկտրամատակարարում» ենթատեսակների

ներդիրներ տրամադրելու համար անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերի առկայությունը հաստատելու համար:

Մասնավորապես, գործի նյութերով չի հաստատվել, որ Ընկերության կողմից որպես համապատասխան ենթատեսակների ներդիրներ ստանալու համար անհրաժեշտ փորձ ներկայացված աշխատանքներն իրականացվել են այնպիսի օբյեկտների կամ աշխատանքների շրջանակում, որոնց մասով առկա է եղել օրենքով և քաղաքաշինության ոլորտը կարգավորող իրավական ակտերով պահանջվող շինարարության թույլտվություն կամ տվյալ աշխատանքների իրավաչափ իրականացումը և որպես լիցենզավորման համար վերաբերելի փորձ հաշվառելու հնարավորությունը հաստատող այլ իրավահաստատող փաստաթուղթ:

Վարչական ակտի իրավաչափության գնահատման համար էական է ոչ միայն այն հանգամանքը, թե արդյոք հայտատուի կողմից որևէ փաստաթուղթ ներկայացվել է, այլ այն, թե արդյոք ներկայացված փաստաթղթերի ամբողջությունը տվյալ վարչական ակտի ընդունման պահին բավարար իրավական հիմք է ստեղծել հայտի բավարարումը թույլատրող վարչական ակտ ընդունելու համար: Տվյալ դեպքում գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայացված փաստաթղթերի բովանդակությունից և դրանցում արտացոլված տվյալներից չէր բխում Ընկերության ներկայացրած աշխատանքները որպես «Կապի համակարգեր» և «Էլեկտրամատակարարում» ենթատեսակների ներդիրների տրամադրման համար անհրաժեշտ և իրավաչափորեն հաշվառելի փորձ գնահատելու բավարար հիմք:

Այլ կերպ՝ նշված վարչական ակտերի ընդունման պահին առկա փաստաթղթային հիմքը չէր հաստատում լիցենզավորման պահանջների կատարված լինելը, իսկ չհաստատված փաստական հանգամանքների պայմաններում վարչական մարմինը չէր կարող իրավաչափորեն ընդունել ներդիրների տրամադրման մասին դրական վարչական ակտ: Այդ պայմաններում գործի նյութերից պետք է բխեր այլ իրավական հետևանք՝ համապատասխան ներդիրների տրամադրման հայտերի մերժման մասին վարչական ակտի ընդունում:

Հետևաբար, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի N 731-Ա/5 հրամաններն իրենց ընդունման պահին չեն համապատասխանել գործի նյութերից բխող փաստական և իրավական հիմքերին, քանի որ դրանցով ընտրվել է այնպիսի իրավական հետևանք՝ ներդիրների տրամադրում, որը չէր կարող հիմնավորվել վարչական վարույթի նյութերում առկա փաստաթղթերով:

Վերոգրյալը համարժեք է այն իրավական իրավիճակին, երբ վարչական ակտը ընդունվել է այնպիսի փաստական հիմքի պայմաններում, որի առկայության դեպքում վարչական մարմինը պարտավոր էր ընդունել այլ բովանդակության վարչական ակտ: Այդ պատճառով նշված հրամանները ենթակա են անվավեր ճանաչման՝ որպես իրենց

ընդունման պահին գործի փաստական և իրավական հիմքերին չհամապատասխանող վարչական ակտեր:

Միևնույն ժամանակ, սույն վարույթի ընթացքում Ընկերությանն ապահովվել է նշված գնահատականը վիճարկելու, նախկինում ներկայացված փաստաթղթերի բավարարությունը հիմնավորելու, լրացուցիչ բացատրություններ, առարկություններ և փաստաթղթեր ներկայացնելու իրական հնարավորություն: Ընկերությունը պատշաճ ծանուցվել է լիցենզավորող հանձնաժողովի նիստերի մասին, սակայն գործի նյութերը չեն համալրվել այնպիսի փաստաթղթերով կամ բացատրություններով, որոնք կհաստատեին նշված աշխատանքների իրավաչափ իրականացումը, դրանց վերաբերելիությունը և որպես համապատասխան ենթատեսակների ներդիրների տրամադրման համար անհրաժեշտ փորձ հաշվառելու հնարավորությունը:

Այս պայմաններում Ընկերության չմասնակցելը նիստերին չի դիտարկվում որպես նախկին հրամաններն անվավեր ճանաչելու ինքնուրույն նյութական հիմք: Այն գնահատվում է միայն այն առումով, որ վարչական մարմինը, պահպանելով վարչական վարույթի լրիվության, օբյեկտիվության և լսված լինելու իրավունքի ապահովման պահանջները, Ընկերությանը տրամադրել է իր դիրքորոշումը ներկայացնելու և գործի նյութերը համալրելու հնարավորություն, սակայն այդ հնարավորության իրացման արդյունքում վարչական ակտերի իրավաչափությունը հիմնավորող նոր կամ լրացուցիչ փաստական հիմքեր չեն ներկայացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի N 731-Ա/5 հրամանները ենթակա են անվավեր ճանաչման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի իմաստով, քանի որ դրանց ընդունման պահին առկա փաստաթղթերից և գործի նյութերից չէր բխում այդ հրամաններով սահմանված իրավական հետևանքը, իսկ նույն փաստական հանգամանքների պայմաններում վարչական մարմինը պետք է ընդուներ այլ վարչական ակտ՝ համապատասխան ներդիրների տրամադրման հայտերը մերժելու մասին:

Գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում **հանձնաժողովը գտնում է**, որ նշված հրամանների ընդունման պահին առկա չեն եղել համապատասխան ներդիրների տրամադրման համար անհրաժեշտ բավարար և ամբողջական փաստական ու իրավական հիմքերը: Մասնավորապես, գործի նյութերով չեն հաստատվում ներկայացված աշխատանքների՝ համապատասխան շինարարության թույլտվության կամ օրենքով նախատեսված այլ վերաբերելի իրավահաստատող փաստաթղթի հիման վրա իրականացված լինելու հանգամանքը, մինչդեռ այդ հանգամանքը նշանակություն ունի ներկայացված աշխատանքները որպես քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում» 2-րդ դասի

լիցենզիայի «Կապի համակարգեր» և «Էլեկտրամատակարարում» ենթատեսակների ներդիրների տրամադրման համար անհրաժեշտ փորձ գնահատելու համար:

Հանձնաժողովը հաշվի առավ նաև, որ վարչական վարույթի ընթացքում Ընկերությանը հնարավորություն է տրվել ներկայացնելու այնպիսի փաստաթղթեր, որոնք կարող էին հիմնավորել նախկինում ներկայացված աշխատանքների վերաբերելիությունը, դրանց իրավաչափ իրականացումը և որպես համապատասխան ենթատեսակների ներդիրների տրամադրման համար անհրաժեշտ փորձ հաշվառելու հնարավորությունը, սակայն նման փաստաթղթեր չեն ներկայացվել:

Հանձնաժողովը եզրահանգեց՝

Ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, Ընկերության կողմից նախկինում ներկայացված հայտերը և դրանց կից փաստաթղթերը, Ընկերությանը ուղարկված ծանուցումները, ինչպես նաև վարչական վարույթի ընթացքում Ընկերության կողմից լրացուցիչ փաստաթղթեր և բացատրություններ չներկայացնելու հանգամանքը՝ հանձնաժողովը եզրահանգեց, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի N 731-Ա/5 հրամանների ընդունման համար անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերը նշված հրամանների ընդունման պահին բավարար և ամբողջական չեն եղել:

Հանձնաժողովը գտնում է, որ գործի նյութերով չեն հիմնավորվում այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք թույլ կտային ներկայացված աշխատանքները գնահատել որպես քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում» 2-րդ դասի լիցենզիայի «Կապի համակարգեր» և «Էլեկտրամատակարարում» ենթատեսակների ներդիրների տրամադրման համար անհրաժեշտ և իրավաչափորեն հաշվառելի փորձ:

Հաշվի առնելով «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը՝ հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության չմասնակցելը չի խոչընդոտում հարցի քննարկմանը և հանձնաժողովի եզրակացության ձևավորմանը:

Որոշեցին՝

1. Արձանագրել, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի և ներդիրի տրամադրման մասին» N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի նոր ներդիրի տրամադրման մասին» N 731-Ա/5 հրամանների ընդունման համար հիմք հանդիսացած գործի նյութերում չեն հաստատվել քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում» 2-րդ դասի լիցենզիայի «Կապի համակարգեր» և «Էլեկտրամատակարարում» ենթատեսակների ներդիրների

տրամադրման համար անհրաժեշտ բավարար և ամբողջական փաստական ու իրավական հիմքերը:

2. Հաշվի առնելով վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքները, Ընկերությանը վարչական վարույթում մասնակցելու, դիրքորոշում հայտնելու և լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու հնարավորություն տրամադրելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ գործի նյութերը չեն համալրվել այլ իրավական գնահատականի հանգեցնող փաստաթղթերով կամ բացատրություններով, **հանձնաժողովն որոշում է, որ** ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի N 731-Ա/5 հրամանները պետք է ճանաչել անվավեր, ուստի հարկ է համարում **առաջարկել** ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահին ընդունել վարչական ակտ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի N 731-Ա/5 հրամաններն անվավեր ճանաչելու մասին:

Նախագահ՝ Դավիթ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հանձնաժողովի անդամներ՝ Գրիգոր ԾԱՏՈՒՐՅԱՆ

Արկադի ԲՈՅԱՋՅԱՆ

Արա ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Նշան ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Արմենուհի ՄԿՐՏՉՅԱՆ